«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լուսինե Քոչարյան

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ-ՄԵՆԹՈՐ՝ Նաիրա Մարտիրոսյան

ՄԱՐԶ՝ Արմավիրի մարզ, «Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… …….3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԿՅԱՆՔԸ…….7

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ……...16

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՎԵՐՋԻՆ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԸ……...21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…..25

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփ Էմինի գործունեության առանձնահատկությունը այսօր արդիականանում է, որ սեփական հայրենիքը սեփական ուժերով կերտելու մեջ է: Այդ հարստությունն հարկավոր է տրամադրել Հայաստանում զարգացնելու ռազմական գործը, ոչ թե հաշվի նստել Ս. Երևանցու նման հոգևորականի առաջ: Պետք չէ կառուցել եկեղեցիներ ու մշակութային վայրեր, այլ գումար ներդնել Հայաստանի ազատագրման գործին՝ նույնիսկ վարձել զինվորներ: Արդիական է այն այնքանով, որ ցանկացած Հայաստանից դուրս ապրող հայեր, եթե վերադառնան Հայաստան և շենացնեն, ունենան իրենց ներդրումը բանակաշինության գործում, միայն այդ դեպքում մենք կունենանք հաջողություններ: Մենք պետք է հույսը մեր վրա դնենք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային պատմագիտության մեջ առ այսօր արդիական է մի հարց. Պատմության մեջ առավել մեծ դերակատարում ունի անհա՞տը, թե՞ ժողովուրդը: Իհարկե, հայ պատմագիտական միտքը բացառություն չէ, և այստեղ ևս կա նման հարցադրում: Այս հարցի վերաբերյալ առկա են տարատեսակ, իրարամերժ մոտեցումներ:

Խոսելով հայ պատմագրության մասին և հաշվի առնելով նրա առանձնահատկությունները՝ պետք է նշել, որ այստեղ անհերքելի մեծ է անհատների դերը ինչպես պետականության բացակայության, այնպես էլ դրա առկայության պայմաններում: Պատմության ողջ ընթացքում նրանց ուսերին է դրված եղել առաջնորդելու, հաղթանակների համար խրախուսվելու, իսկ պարտությունների համար դատապարտվելու ծանր բեռը: Հայոց պատմությունը, ի ուրախություն մեր ժողովրդի, նման կերպարների պակաս չի ունեցել՝ սկսած Արտաշես Առաջինից, Տիգրան Մեծից, Վարդան Մամիկոնյանից միչև Դավիթ Բեկ, Հովսեփ Էմին, Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Մոնթե Մելքոնյան և բազմաթիվ այսպիսի պատմական անձինք, որոնք դարձան մեր պատմության շարունակության երաշխավորները:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նման կերպարներ ծնվում են ժամանակի պահանջով ու հենց այդ ժամանակի համար արդիական խնդիրների լուծման համար: Այսպիսի գործիչների պակաս չուներ նաև 18-րդ դարը, երբ հայ ազատագրական շարժումը աշխուժանում էր, մարդկանց մոտ զարգանում էր ազատագրվելու և ազատ ապրելու գաղափարը, ու հենց այդ մտայնությունները կյանքի կոչելու համար առաջ եկան այդ շրջանի նշանավոր դեմքերը, որոնց

առաջնորդությամբ էլ տեղի էր ունենում հայ ազատագրական շարժումը՝ միշտ օրակարգային կարևոր խնդիր պահելով Հայկական հարցի բարձրաձայնումը ու դրա լուծումը:

Հետազոտականի նպատակը

Հովսեփ Էմինի՝ որպես հայ ազատագրական շարժման գործչի բացահայտման գործընթացն է: Հովսեփ Էմինը որի գործունեությունը հանդիսանում է մեր ուսումնասիրության առարկան, և որի օրինակով էլ փորձ է արվում բացահայտել ժամանակի բացասական կողմերը, նրա անհաջողությունների պատճառները ու դրանց վերացման միջոցով հասնել Էմինի կամ, ընդհանրապես, ձախողված գործիչների ծրագրերի իրականացմանը:

Նման գործերի և ծրագրերի, ինչպես նաև անհատների կերպարների լուսաբանումը ունի մեծ դեր և նշանակություն, քանի որ մինչ օրս մեր ժողովրդի առջև ծառացած են այնպիսի խնդիրներ, որոնք արդիական էին միջնադարում, ինչպես նաև դրանից հետո. այդ խնդիրների ճիշտ և անկողմնակալ լուսաբանումը հնարավորություն կտա խուսափել պատմական սխալներից: Պատմության լավատեղյակությունը այսօրվա կանոնակարգված և կանխորոշված քաղաքականության հիմքն է, նամանավանդ պատմության այն դրվագները, որոնք քաղաքական ծրագրեր են, անհատների գործունեություն կամ էլ արտաքին աշխարհի հետ հարաբերությունների վերլուծություն:

Հովսեփ Էմինի կյանքի ու գործունեության դիտումը նոր, ավելի պայծառ լույսի ներքո մեկնաբանությունը այսօրվա սփյուռքահայ երիտասարդների շրջանում կարող է ոգևորության նոր ալիք առաջ բերել, քանզի նա հայրենասիրության և իր ծրագրի կատարման անխոնջ սպասավորն էր, հաստատակամության իսկական օրինակ: Եվ ցանկալի է, որ և՛ սփյուռքահայ, և՛ հենց բուն երկրի երիտասարդությունը անվերապահորեն հետևեն այդպիսի օրինակներին:

Այսպիսով՝ 18-րդ դարը հայ ազատագրական շարժման աշխուժացման ժամանակաշրջանն էր, որի ժամանակ տեղի ունեցան իրադարձություններ, որոնք կանխորորոշեցին մեր ժողովրդի հետագա ճակատագիրը, հետևաբար այդ շրջանի ուսումնասիրությունը ունի մեծ կարևորություն: Հենց այդ շրջանում ձևավորվեց հակաֆեոդալական ռեակցիան, այս դարն ուներ հեղափոխական բնույթ, որի նպատակն էր հայ ժողովրդի ազատագրումը շահական ու սուլթանական տիրապետությունից:

Նոր շրջանի հայ գործիչները ազատության ու անկախության սոսկ քարոզիչներ չէին. նրանք

իրենց տարածած գաղափարների կրողներն էին, միաժամանակ քաղաքական գործիչներ, ովքեր հանձն էին առել այդ շարժումների ղեկավարությունն ու մարդկանց գաղափարապես ու ֆիզիկապես զինելու դժվարին և պատասխանատու գործը: Իհարկե, նրանցից ոմանք իրենց գործունեության ընթացքում թույլ են տվել սխալներ, սակայն դրանք էլ ճիշտ մեկնաբանության շնորհիվ կարող են ուսուցողական լինել: Դրա վառ ապացույցն է այն, որ Էմինը և իր գաղափարակիցները իրենց առաջիկա ծրագրում հրաժարվեցին միապետական կարգերից՝ հավանություն տալով հանրապետականին՝ հիմքում դնելով մի մարդու սխալից խուսափելու անհնարինությունը:

Նոր շրջանն իր հետ բերեց նոր դեմքեր, նոր իրադարձություններ, որոնք բոլորովին այլ մեկնաբանության կարիք ունեին: Այս շրջանի գործիչները դուրս էին գալիս կրոնական սահմանափակումներից ու նայում շուրջը աշխարհիկ հայացքով: Բնականաբար նման գործիչների գործունեությունը անհնար կլիներ դիտարկել նախկինի պես: Այժմ անհրաժեշտ էր նոր հայացք, որով կդիտվեր տեղի ունեցածը ու կմեկնաբանվեր նորովի: Այդ հարցերի նորովի լուսաբանումը պահանջում է ժամանակակից մեկնաբանում:

Այս շրջանի գործիչները, այդ թվում՝ Հովսեփ Էմինը բավարար չափով ուսումնասիրված չեն: Հովսեփ Էմինի կյանքի ու գործունեության մասին հիմնական տեղեկություններ կարելի է իմանալ նրա «Հովսէփ Էմինի կեանքն ու արկածները»[1] ինքնակենսագրական գրքում, որտեղ շարադրված են 18-րդ դարի հայ ազատագրական շարժման նշանավոր դրվագները: Այդ գիրքը Էմինի վերջին փորձն էր տարածելու հայրենասիրություն և հայրենիքի ազատագրման կարևորության գիտակցություն: Այն առաջին անգամ տպագրվել է անգլերենով 200 օրինակով: Եվ միայն 1958 թ-ին Բեյրութում Խաշմանենանը թարգմանեց հայերեն:

Հովսեփ Էմինի կյանքի մանրամասիների մասին մենք տեղեկանում ենք նրա գրած նամակներից, որոնցից մի քանիսը նա թարգմանել է անգլերեն ու կցել իր ինքնակենսագրությանը, սակայն շատերն էլ ոչ միայն անտիպ են մնացել, այլև դուրս են մնացել հայ պատմաբանների ուշադրությունից:

Հովսեփ Էմինի կյանքի ու գործունեության ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ նա 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման կարկառուն դեմքերից է, հայ լուսավորական սերնդի խոշոր ներկայացուցիչներից, ով ապրելով տարբեր միջավայրերում, տարբեր ազգերի ու կրոններ մարդկանց հետ երբեք չկորցրեց իր հայ լինելու

գիտակցությունը, կուլ չգնաց գայթակղիչ առաջարկներին, որոնք ուղղված էին իր կյանքը բարեկեցիկ դարձնելուն: Նա եղավ ու մնաց հայրենիքի ազատագրության նվիրյալը ու իր կյանքով օրինակ ծառայեց հայրենասեր բազմաթիվ երիտասարդների համար:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. Ներկայացնել Հ. Էմինի կենսագործունեությունը Հնդկաստանում
2. Լուսաբանել Հ. Էմինի գործունեությունը Ռուսաստանում և Այսրկովկասում
3. Հանգամանորեն ներկայացնել Հ. Էմինի կյանքի վերջին շրջանը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը

Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար և գործնական նշանակություն՝ գործնական մանկավարժությամբ զբաղվողների, դպրոցի ուսուցիչների, դասղեկների, աշակերտների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԿՅԱՆՔԸ

Բազմադարյան հայ ազգային ազատագրական պայքարը՝ անարդյունք բանագնացություններ, աղերսագրեր, խնդրագրեր չէին կարող իրենց կնիքը չթողնել հայրենիքում գաղափարական և նյութական ներուժի վրա: Բուն երկրում չկար համապատասխան միջավայր ազատագրական պայքար սկսելու համար, ուստի հայ ազատագրության կենտրոնը տեղափոխվեց գաղթավայրեր՝ մասնավորապես Հնդկաստան (Մադրաս, Կալկաթա, Սուրաթ, Բոմբեյ, Դելի, Չիչրա, Մուրիշիդաբաղ, Հայդաբաղաղ և այլն) և Ռուսաստան. սրանք էլ մշակութային և տնտեսական կենտրոններ էին:

Գաղթավայրերում էին զարգանում նաև գիտությունն ու գրականությունը, այստեղ էին մշակութային կարևորագույն կենտրոնները, զարգացման հասավ տպագրությունը (Վենետիկ, Ամստերդամ, Հռոմ, Կ.Պոլիս, Լվով, Լիվոռնո), հայերը զարգացնում էին գաղթավայրեր, բայց ոչ բուն հայրենիքը:

Հնդկահայերի հիմնական զբաղմուքը առևտուրն ու արհեստներն էին: Հայ առևտրականների համար նպաստավոր պայմաններ էին. եվրոպական դրամատները դեռևս չէին հասցրել տիրել ողջ Հնդկաստանին և պայքարի մեջ էին հնդկական իշխանների հետ, որոնց համակրանքն էին վայելում հայերը: Հայերը առևտուր էին անում ինչպես ծովափնյա, այնպես էլ հեռավոր վայրերում: Նրանք պայամանագիր էին կնքել «Արևելա-հնդկական ընկերության» հետ, որը անգլիական էր և հայերին հնարավորություն էր ընձեռում երթևեկել անգլիացիների իշխանության տակ գտնվող տարածքներում ու առևտուր անել անգլիական նավերով:

Հաջող առևտրի շնորհիվ հայերը Հնդկաստանում հասել էին մեծ հաջողությունների: Հնդկաստան հայերը ոտք էին դրել շատ ավելի վաղ ժամանակներից: Դրա մասին է վկայում այն տեղեկությունը, որ Դվինի առևտրականների շարքերում կայնին նաև հնդիկներ: Այդ փոխհարաբերությունների մասին է վկայում այն, որ Անիի Կաթողիկե եկեղեցու ջահը բերված է Հնդկաստանից:

Այս իրավիճակը փոխվեց 18-րդ դարի կեսին, երբ Հնդկաստանում անգլո-ֆրանսիական մրցակցությունը ավարտվեց Անգլիայի հաղթանակով, ինչը թույլ էր տալու Անգլիային նորանոր տարածքներ գրավել և այդ՝ արդեն իրեն պատկանող տարածքներից հեռացնել

եվրոպացիներին և ընդհանրապես արտասահմանյան այն ուժերին, որոնք կարող էին հակազդող ուժ հանդիսանալ իրենց համար, այդպիսի ուժ իրենցից ներկայացնում էին այն ժամանակ նաև հայերը:

Զգալով սեփական հայրենիքի բացակայության դժվարությունն ու դժբախտությունը՝ հայերն իրենց հայացքներն ուղղեցին դեպի հեռավոր հայրենիք, որը հիվանդ մոր պես սպասում էր իր զավակների հայտնվելուն: Սեփական երկրում հայերը կլինեին պաշտպանված և ապահով՝ ունենալով սեփական կապիտալ ստեղծելու լայն ասպարեզ, սակայն Հայաստանը գտնվում էր օտարի տիրապետության տակ, այնտեղ չկար անձի, գույքի և ընդհանրապես ապահովություն, ուստի, նախևառաջ, պետք էր այն ազատագրել օտար բռնակալությունից: 18-րդ դարում գաղութահայերը, որոնք ոգևորվել էին Արցախի ազտագրական կռիվներից և այն համարում էին քաղաքական անցուդարձերի պատճառով ձախողված իրողություն, ցանկանում էին վերամարմնավորել ազատագրական կռիները: Այս գաղափարը վեր հանեց մի շարք նշանավոր երևելիների, որոնցից առանձնանում էր Հովսեփ Էմինը՝ 18-րդ դարի ազատագրական շարժման ռահվիրան:

Հովսեփ Էմինը այն երևելիներից էր, որ ոչ միայն բերանացի և գրավոր քարոզչություն իրականցրեց հայոց մեջ, այլև նախանշեց այդ գաղափարներն իրականացնելու գործնական միջոցները:

Հովսեփ Էմինը ծնվել է 1726թ. Պարսկաստանի (Իրան) Համադան քաղաքում, որը ինչպես ինքն է իր ինքնակենսագրականում նշում, այն վայրն է, որտեղ իր դժբախտ ազգը ապրում է Շահ- Աբբասի ժամանակներից սկսած: Էմինի նախնիները ևս Շահ-Աբբասի կողմից բռնագաղթեցվել են Հայաստանից և բնակեցվել Պարսկաստանում: Էմինը մանրամասնություններով ներկայացնում է իր տոհմաբանությունը, որտեղ նաև հիշատակում է մեկ ուրիշ Էմին(Էմին առաջին): Այս Էմինը իր էությամբ և մասնագիտությամբ զինվորական էր, պարսկական բանակում երկար ժամանակ վարում էր հազարապետի պաշտոն, ապա եղավ կարավանի չաուշ (պահապան): Էմին առաջինը Պարսկաստանում հայտնի էր իր քաջագործություններով: Պարսից երկիրը նրան չպատասխանեց ըստ արժանվույն՝ մատնելով չքավորության, ինչին էլ հետագայում պետք է արժանանար նրա թոռան թոռը Անգլիայում: Հետագայում հենց այս Էմինի արյունն էր, որ պիտի պիտի 18-րդ դարի Էմինին մղեր հայրենիքի ազատագրման և զինվորական գործին, որի մասին էլ նա մեծ հիացմունքով ասել է, որ սա միակ արհեստն է և բնագավառը, որը կարող է հնարավորինս մեծ օգուտ բերել ազգին, այս արհեստի գերազանց իմացությունն է

, որ կապահովի հաղթանակ, ազատ և հզոր երկիր: Ռազմարվեստի և ընդհանրապես զենք գործածելու մասին նա իր ինքնակենսագրականում գանգատվել է. «Իմ Հայրը, ինչպէս եւ միւս Հայերը, ինձ սովորեցրել է միայն մայրենի լեզուով կարգալ¬գրել, անգիր անել Սաղմոսն ու երգել եկեղեցում: Բայց նա ինձ չսովորեցրեց զէնք գործածել եւ ոչ էլ ինձ հրահրեց մեծ գործերի էութիւնը հասկանալու համար...»:

Երբ Էմինը սկսեց այդ ճամփորդությունը միակ քրիստոնյան էր և ենթարկվում էր մահամեդականների հալածանքներին: Նա այդ քարավանի հետ ճանապարհը շարունակեց մինչև Քոմ: Նա այնքան ծարավ էր, ինչքան թուրքն է ծարավ հայի արյունով: Տեսնելով մի աղբյուր՝ սկսեց խմել, սակայն անհագ ծարավը չէր հագենում, ուստի որոշեց խլել ճանապարհով անցնող թուրք երեխայի ձեռքի սափորը ու դատարկեց դրա մեջ եղած ջուրը: Այս դեպքը մեծ աղմուկ առաջացրեց, և Էմինը փախավ մոտակա լեռները: Բայց այդ իրադրությունից նա կարողացավ դուրս գալ: Էմինը ճանապարհ ընկավ Ջուղա՝ Սպահանի արվարձաններից մեկը: Հոր ապաքինվելուց հետո անառողջ վիճակում հայտնվեց Էմինը, նա 5 ամիս անկողին ընկավ: Չկային նյութական միջոցներ նրա վիճակը լավացնելու համար: Երբ ձմեռը մոտեցավ, Էմինը ապաքինվեց: Սակայն նրան վիճակված չէր հարթ ճանապարհով ընթանալ: Պարսից բանակի մի սպա՝ համադանցի բեյ, առանց պատճառի ձերբակալում է Էմինի հորեղբորը՝ Միքայելին:

Էմինը այս անարդարությունը չէր կարող հանդուրժել՝ գնաց հանդիպելու Նադիր շահին, որն այդ ժամանակ Սպահանում էր: Սա ևս մեկ անգամ դրսևորեց նրա տաքարյուն բնավորությունը:

Էմինն ու իր մեծ հայրը Էմինի Դավիթ հորեղբոր աջակցությամբ մտան մի նավ և հասան Կալկաթա, որտեղ լսեցին իրենց ընտանիքից շատերի մահվան բոթը: Տեղի ունեցածը ստիպում էր Էմինին մտածել, թե ինչքան ավելի պատվաբեր կլիներ եթե նրանք մահանային կռվում՝ պայքարելով սեփական ազատության համար, ոչ թե ստրկության մեջ:

Էմինի հայրը իր հայրենկիցներից շատերի նման վաճառական էր, սակայն Պարսկաստանում առևտրի լայն հնարավորություններ չկային: Ուստի Էմինի հայրը, իր հայրենակիցներից շատերի նման, հեռացավ ավելի ապահով և գործելու ավելի լայն արեալ ունեցող, զարգացած երկիր:

Էմինի հայրը վաճառականությամբ էր զբաղվում Հնդկաստանի Կալկաթա քաղաքում և այսպես հոգում էր իր ընտանիքի բարեկեցությունը, որդին ևս, գործելու ասպարեզ չգտնելով, 18 տարեկանը նոր բոլորած մեկնեց հոր մոտ:

Էմինը վաղ տարիքում կորցրել էր մորը, ուստի նրա դատիարակությամբ զբաղվել էր պապը, հենց նա էլ Էմինին սովորեցրեց հայերեն: Հետագայում՝ Անգլիայից հորը գրած նամակներից մեկում Էմինը նշում էր, որ հեռացա քեզանից խիզախություն ձեռք բերելու համար, և դա հաջողվեց նրան:

Հովսեփ Էնինն իր ինքնակենսագրականում գրում է. «...Ես ճանապարհուեցի Գիլան, այնտեղից Իսպահան, Իսպահանից Բասրա եւ այնտեղից Կալկաթա, որտեղ իմ հայրը վաճառական էր ե մտածում էր ինձ եւս վաճառական դարձնել: Սակայն ես պարզ տեսնում էի, թէ ինչպէս մեր ժողովուրդն արիւն-քրտինք էր թափում մի կտոր հացի համար եւ թէ ինչպէս, երբ նա մի քիչ դրամ էր հաւաքում, անմիջապէս կողոպտւում էր ստայօդ ռաբանութիւններով, երբեմն փաշաների, երբեմն խաների եւ երբեմն էլ Հնդիկ իշխանների կողմից, որովհետեւ ձեռքին զէնք չունէր…»:

Կալկաթայում գտնվելու սկզբնական շրջանում Էմինը չէր բարձրաձայնում Եվրոպա գնալու իր ցանկության մասին: Էմինի հայրը նրան ընդունել է տալիս Կալկաթայի անգլիական քոլեջը 1745 թ.: Էմինը ուսումնառության ընթացքում ցուցաբերում է գերազանց ընդունակություններ, իհարկե, ուսումնառությունը անարդյունք չէր կարող անցնել: Նա ծանոթանում է եվրոպացիներին, նրանց մշակույթին, գրականությանը:

Դեռ մի քանի բառ չսովորած Էմինը հարց է տալիս ուսուցիչ Մր. Փերրընթին, թե արդյո՞ք անգլիական օրենքը արգելք է դնում նրա առջև , ով ցանկանում է հեռանալ հեռավոր մի երկիր՝ թողնելով իր հորը:

Ուսուցիչը ծաղրական ժպիտով պատասխանում է. «Ի՛նչ ստրուկներ եք դուք, և որքան տգետ ազգ եք: Այսքան տարիներ մեր մեջ ապրում եք և չգիտեք մեր օրենքները: Միակ պայմանը այն է, որ բռնի դրամ չպահանջեք ձեր հորից»:

Քոլեջին կից գործում էր անգլիական մի զորանոց, 19-ամյա Էմինը անտարբեր չէր թողնում: Երկար ժամանակ հափշտակված դիտում էր զինվորների վարժանքները, զորախաղերը: Հենց այստեղ էր, որ նա հաստատ որոշեց դառնալ զինվորական և իր ունեցած գիտելիքներով օգտակար լիներ սեփական ազգին: Կյանքը հայրենիքին նվիրելու վեհ գաղափարների մասին պատանին հայտնում է հորը, որը անվերապահորեն հավատում էր որդու վաճառական դառնալուն: Էմինի հայրը անմիջապես մերժեց որդուն: Հոր և որդու միջև տեղի են ունենում երկարատև վեճեր, Էմինը անգամ փախուստի փորձ է անում, սակայն անհաջող: Ի վերջո հայրը իբր տեղի է տալիս՝ համաձայնելով թույլ տալ որդուն մեկնել, սակայն չի տալիս նրան համապատասխան դրամական միջոցներ:

Էմինը, որպես սպասավոր, վարձվում է Կալկաթայից Անգլիա ուղևորվող «Վոլպոլ» առագաստանավի վրա, և սկսում է նրա վեցամսյա դժվարին ուղևորությունը, որի ժամանակ նա տանում էր բազմաթիվ դժվարություններ՝ ապրում նավապետերի փշրանքներով, տանում նրանց հալա-ծանքներն ու կողոպտությունները: Էմինի նկատմամբ հալածանքներն սկսել էին դեռևս նավարկության առաջին իսկ օրը, երբ նրան չէին ընդունում այլադավան՝ անգամ նույնադավան մարդիկ՝ համարելով նրան անմիտ արկածախնդիր: Գնալուց առաջ Էմինը նամակ է գրում հորը, որն էլ համակերպվում է որդու ցանկության հետ: Էմինը հանդիպեց նաև իր մեծ հորը և հորեղբորը՝ ստանալով նրանց օրհնությունը: 1751 թ. սեպտեմբերի 14-ին Էմինը հայտնվում է Անգլիայում, որտեղ մնացել էր առանց գումարի և ապրուսի միջոցի: Սակայն ճակատագրի բարեհաճությունն էր, որ շատ հաճախ օժանդակում էր ուտոպիստ երիտասարդին: Անգլիայում նրան սպասում էին տաժանակիր օրեր: Նա ստիպված էր աշխատել բեռնակիր, դոնապան, բանվոր, լրագիր, փոստատար և այն ամենը ինչ կարող էր: «Այդ տանջանքները, սակայն, մազաչափ չէին հուսահատեցնում Էմինին՝ նա գնում էր երկնային դրախտ մը, ուր պիտի բացուէին իր աչքերը եւ ուր ան պիտի տեսնէր աշխարհը»: Երբ Էմինը ցանկություն հայտնեց ընդունվելու ռազմական ակադեմիա, պարզվեց, որ անհրաժեշտ է հեղինիակավոր մեկի երաշխավորագիրը, սակայն այդպիսի մեկը դեռևս չկար, ուստի Էմինը շարունակում էր աշխատել օրվա հացի համար և անգամ դրամ խնայել անհատական դասընթացներ անցնելու համար: Այդ մասնավոր դպրոցը գտնելու հարցում նրան օգնել էր Ստեփանոս անունով մի հայ վաճառական, որի տանն էլ մի որոշ ժամանակ ապաստանում է Էմինը: Այս օգնությունը երկար չի տևում. Էմինը կրկին ընկնում է Լոնդոնի փողոցները, նրա դժվարին կյանքը շարունակվում է: Կրկին պատահականությունը օգնության հասավ Էմինին: Նա Լոնդոնի Սեն Ջեյմս այգում ծանոթանում է անգլիացի գրող և հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Էդմոնդ Բըրքի հետ: Այդ հանդիպումը տեղի է ունենում հետևյալ կերպ՝ Էմինը նույն այգում հանդիպում է նաև փաստաբան Պոտլիիին, որին ճանաչում էր դեռևս Կալակթայից, երբ ինքը դեռ հաճախում էր տեղի քոլեջը: Երկար նախապատրաստությունից հետո Էմինը որոշում է մոտենալ նրան, տեղեկություններ իմանալ իր հոր մասին: Նրանց շփումը ստացվեց, և Էմինը բացեց իր սիրտը խոսակցի առաջ: Սակայն օտարականը, որը ուղեկցում էր փաստաբանին՝ զինվորականներին ուղղված ստրուկ որակումը վշտացրեց Էմինին: Կարճ

ժամանակվա շփումից հետո փաստաբանը գնաց՝ Էմինին թողնելով օտարականի հետ, նա հենց Էդմոնդ Բըրքն էր, որն էլ իր խոսքում ասաց, որ ինքն էլ իր «հոր քովեն փախած երիտասարդ» է: Անգլիացի գործչին դուր են գալիս արևելցի պատանու մտքերը, նրանց խոսակցությունը երկարում է, նրանք այնքան են մտերմանում, որ Էդմոնը Էմինին հրավիրում է իր տուն: Անգլիացի գրողը բացի նյութական աջակցությունից Էմինին տալիս է նաև շատ ավելի կարևոր խորհուրդներ՝ ինչ գրքեր կարդալ, ինչ գրականություն ուսումնասիրել

Էդմոնն էլ իր հերթին հետագայում չմոռացավ «հոր քովեն փախստական որդուն»:

Լոնդոնում ապրած տարիները իրենց անջնջելի հետքը թողեցին Էմինի աշխարհայացքի ձևավորման վրա՝ նա ուսումնասիրեց անգլիացի մեծ մտածողների գործերը, հասավ գաղափարական որոշակի հասունացման:

Մի երջանիկ պատահականություն ևս տեղի ունեցավ նրա կյանքում, որն էլ վերջ տվեց Էմինի թափառումներին: Էմինը ծանոթանում է մի երիտասարդի հետ, սկզբում խոսում էր թուրքերեն: Սակայն շուտով իմանում, որ նա հալեպցի հայ է, որը Նորկումբերլանդի դքսի համար արաբական ձի է բերել, բայց անգլերեն չի խոսում. նրան թարգմանիչ է անհրաժեշտ. գործ, որը կարող էր հանձն առնել Հովսեփ Էմինը: Էմինը մեծ ուրախությամբ համաձայնում է՝ անգամ առանց գիտակցելու այդ այցելության դրական հետևանքները:

Էմինն արդեն հուսահատվել էր և պատրաստվում էր վերադարձի, սակայն ճակատագիրը չէր կարող այդպես վարվել Էմինի՝ հանձին նրա Հայաստանի ազատագրության նոր ծրագրի կազմողի և մասնակի իրագործողի հետ:

Էմինին Նուրկումբրլանդի դքսի մոտ ուղեկցող ձիապանը նշում է. «Լորտը առանց ընտիր զգեստներու ալ կը ճանչայ մարդը:

Երբ Էմինը հասնում է դքսի մոտ, դուքսը հայտնում է, որ չի կարողանում լեզու գտնել հայ վաճառականի հետ, քանի որ լեզուների չի տիրապետում: Էմինը խոստանում է ավելի լավ ձի գտնել, եթե դուքսը նրան որևէ պաշտոն տրամադրի: Էմինը հավաստիցնում է Կումբերլենդի դքսին, որ կարող է անմիջական շփում ունենալ արաբների հետ, քանզի լավ է տիրապետումպարսկերեն, թուրքերեն, հայերեն: Սրանից հետո դուքսը հետաքրքրվում է նրա պատմությամբ:

Սկզբում Էմինը թաքցնում է իր գալու իրական պատճառը, սակայն շուտով զրույցը ավելի մտերմիկ բնույթ է ստանում: Նա առավել հարգանքով լցվեց Էմինի անձի նկատմամբ, երբ իմացավ, որ այդքան դժվար կացության մեջ Էմինը պարտք չունի՝ գրպանում ունենալով մեկ

շիլինկ:

Էմինը Նորկումբերլենդի դքսին գրած նամակում հայտնում է, որ իր ընտանիքը՝ սկսաց ապուպապերից եղել են զինվորականներ, սակայն ենթարկվել են հալածանքների.հայերն ապրում էին ստրկության մեջ, ինչն էլ խոր սպի է թողել Էմինի սրտում: Սա է հիմնական պատճառը, որ Էմինը մեկնում է Եվրոպա՝ նա չէր կարող ապրել անասնական կյանքով՝ առանց ազատության, առանց գիտության:

Այս արքայազնի միջնորդությամբ էր, որ 1755 թ. Էմինը ընդունվում է Լոնդոնից ոչ այնքան հեռու գտնվող Վուլվիչի ռազմական ակադեմիան, որտեղ մասնագիտանում է հրետանային գործի և ամրոցաշինության մեջ: Ուսումնառությունը տևեց մոտավորապես 13 ամիս: Ուսումնառությունը երկար չտևեց, քանի որ սկսել էր յոթնամյա պատերազմը: Նա արդեն 31 տարեկան էր, ուստի նրա համար ավելի ուսուցանող կլինի մասնակցել պատերազմին և ունենալ գործնական գիտելիքներ:

Էմինը մասնակցում է 18 ռազմական գործողությունների: Կումբերլանդի դուքսը միանգամայն գոհ նրա քաջությունից, դրամական առատ վարձատվություն է տալիս և ուղարկում Լոնդոն: Պրուսիայի թագավոր Ֆրեդերիք Մեծից ստացավ այդ երկրի բարձրագույն «Սև Արծիվ» շքանշանը:

Ռազմական գործողությունների ժամանակ Էմինը վիրավորվում է, սակայն չի լքում ռազմադաշտը: 1758թ. վերջին Էմինն արդեն Անգլիայում էր, տեսակցում է վարչապետ Ուիլիամ Պիտտ Ավագին , որից փորձում է ճշտգրտել Անգլիայի դիրքորոշումը կապված Հայաստանի ազատագրության խնդրի հետ: Բանակցություններից պարզ է դառնում, որ Պիտտ Ավագը և անգլիական կառավորությունը շահագրգռված չեն Հայաստանի ազատագրության խնդրով:

Պիտտ Ավագը, սակայն, գնահատելով Էմինի ռազմական գիտելիքները և հմտությունները, նրան առաջարկում է կամ ծառայել անգլիական բանակում սպայի աստիճանով, կամ պետական ծառայության անցնել Հնդկաստանում: Իհարկե, սա ևս մեկ անվստահ վերաբերմունք էր Հայաստանի ազատգրության Էմինի ծրագրի նկատմամբ, որն էլ մյուսների պես չկարողացավ կոտրել Հայաստանի ազատագրության անխոնջ գործչի կամքը, և Էմինը, մերժելով այս գայթակղիչ առաջարկները, պատասխանում է. «Քանի ես ապրում եմ, պետք է ծառայեմ իմ հայրենիքին , և եթե ես ծնված եմ, որպեսզի ազատեմ իմ անպաշտպան ժողովրդին, ապա ոչ ոք չի կարող արգելք լինել ինձ: Աստծո կամքն է, որ պետք է կատարվի»:

Էնինը Լոնդոնում ավարտել էր իր առաքելությունը, ուստի հայցքն ուղղեց արևելք: Էմինը գրում է նամակներ, որոնցից մեկը ուղղված էր կառավարիչ Տրեյքին, մյուսը՝ հորը, երրորդը՝ Կալկաթայի հայերին, իսկ վերջինը Վրաստանի թագավորին:

Ինչպես Հայաստանի ազատագրության մյուս երախտավորը՝ Իսրայել Օրին, Էմինը ևս պատերազմող հիմնական ուժ ծրագրել էր դարձնել հայկական զորքը, Էմինի ծրագրի մեջ էր մտնում համահայկական ապստամբության կազմակերպումը: Նաև կարևոր էր համարվում ամբողջ պատերազմական ուժի միավորումը ծանր կշիռ ունեցող որևէ թագավորական տան հովանու ներքո հավաքելը, որը քիչ թե շատ կունենար կազմակերպված զինված ուժ և կկարողանար կանոնակարգել նոր հավաքված զինված ուժերը:

Էմինը ուներ քաղաքական ավելի իրական և տարբերող հայացքներ: Երկար տարիներ ապրելով Եվրոպայում, հասկանալով նրանց մշակույթն ու կենցաղը, նրանց համար կարևոր արժեքները՝ Էմինը հասկանում էր, որ նրանց շահերից ամենևին էլ չի բխում օգնել արևելյան մի փոքրիկ ժողովրդի՝ վատացնելով հարաբերությունները հզոր պետությունների հետ:

Էմինը Հայաստանի ազատագրության հարցի լուծումը կապում էր Վրաստանի՝ իր անմիջական հարևանի հետ: Նա նամակ է գրում Վրաստանի Հերակլ Երկրորդ թագավորին՝ առաջարկելով միավորվել, բացատրում է Եվրոպական օգնության առանձնահատկությունները և կարևորությունը:

Էմինը Հերակլին գրած իր նամակում գրում է. «Ես կցանկանայի ծառայել Ձեզ, որպես եվրոպական սպա, և ըստ իմ համեստ կարողությունների սովորեցնել ձեր զինվորներին կռվել եվրոպացիների նման: Ես կցանկանայի ձերդ մեծությանը տեղեկացնել, թե ինչպիսի միջոցներով է, որ եվրոպական ազգերն այդքան հաղթանակող և այդքան քաջ ռազմիկներ են լինում: Իմ նպատակն է Ձերդ մեծության մոտ ծառայության մտնել, միաժամանակ ինձ հետ բերել ամեն կարգի հմտությամբ օժտված մարդիկ՝ ուժեղացնելու և վերականգնելու ձեր պետությունը

եվրոպական պետությունների նման»:

Իհարկե Էմինի նպատակը ամենևին էլ Հերակլի մոտ ծառայելը չէր: Երկար ճանապարհորդությունները, հանդիպումները, եվրոպական կենցաղին և մտածեկակերպին ծանոթանալը Էմինին հասկացնել տվեցին, որ Եվրոպան ամենևին էլ շահագրգռված չէ հայկական խնդրի լուծմամբ, և դա այդպես կլինի այնքան ժամանակ, միչդեռ հայերը

քաղաքական հզոր ուժ չեն, և Եվրոպական երկրները ակնկալիք չունեն հայոց պետականության վերականգնումից:

Հովսեփ Էմինի քաղաքականության շառավիղը հայ քաղաքական ուժերին միավորելն էր, և այդ գործում նա օգնական էր համարում վրաց արքունիքը, քանի որ Վրաց Վալիները, որոնց նաև թագավոր էին կոչում, անդրկովկասյան խաների հետ համեմատած, ավելի արտոնյալ վիճակում էին:

Էմինը օրինակ է բերում Անգլիան՝ խոստանալով ծառայել առանց դրամական փոխհատուցման, քանի որ վրաց վալիները, որոնց նաև թագավոր էին կոչում, անդրկովկասյան խաների հետ համեմատած, ավելի արտոնյալ վիճակում էին:

Երբ ստեղծվեցին ավելի նպաստավոր պայմաններ, նա նորից մտավ գերմանական զորքերի կազմ և անձամբ հանդիպեց Ֆրիդրիխ թագավորին, կրկին մասնակցեց ռազմական գործողություններին, ունեցավ հաջողություններ, բայց այս անգամ էլ վերադառնում է Անգլիա՝ Լոնդոն:

Այստեղ նա ևս մեկ անգամ համոզվում է, որ հայը կազատագրվի միայն ու միայն սեփական սեփական ջանքերի շնորհիվ: Հայերին ու Հայաստանին ծանոթանալու կարևորությունը գնահատելով՝ Էմինը ձեռնարկում է ճանապարհորդություն դեպի հայրենիք:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Հասնելով Հայաստան՝ ստանում է բացասական տպավորություն, քանի որ նա, որ լսել էր Սյունիքի և Արցախի քաջամարտիկների մասին ու սպասում էր բոլորովին այլ ընդունելություն, սակայն, գալով հայրենի երկիր, արժանացավ անսպասելի ընդունելության: Էմինը տեսավ վախեցած, ստրուկ մի ժողովուրդ, որին ոտքի հանելը, միսնական պայքար մղելը շատ ժամանակ և ջանքեր կպահանջեր: Էմինը, ինչպես գիտենք, գիտեր թուրքերեն, երկար տարիներ ապրելով Եվրոպական միջավայրում յուրացրել էր նրանց նիստուկացը, ուստի թուրքերի մոտ ստեղծվում է կարծիք, թե նա որևէ բարձրաստիճան հայ է: Էմինը շուտով հասնում է Ճինիս անունով հայկական մի գյուղ, որտեղ գյուղացիների հետ բռնվում է մտերմիկ զրույցի՝ նախ հարցնելով, թե ինչու են դեմ լինում, երբ իրենց հայրենակիցները ցանկանում են ռազմական գործի մեջ մտնել(երևի հիշեելով իր օրինակը), կամ ինչու իրենք ազատ չեն և չունեն իրենց թագավորը: Գյուղացիները պատասխանում են, որ իրենց փրկությունը գալու է մյուս աշխարհում: Էմինին այդ պատասխանը բարկություն է պատճառում, ու նա գյուղացիներին կոչ է անում փոխվելու: Էմինի ելույթը անիմաստ չէր, և գյուղացիները երդում տվեցին ու սկսեցին լսել Էմինին: Էմինն էլ լուսավորչին հատուկ վստահությամբ կանչել տվեց գրագետ քահանաներից մեկին և հանձնարարեց կարդալ Մ. Խորենցաու՛Հայոց պատմությունը՛, բացատրեց որ մենք էլ հավասար ենք մյուս ժողովուրդներին և ունենք այն բոլոր իրավունքները ինչ մեզ վրա իշխողները: Ազատության, միասնականության և հզորանալու մասին քարոզը դիպավ խեղջ ու ազատության կարոտ ժողովրդի սրտին, տեղի քահանան, որը ևս ոգևորված էր այդ ոգեշունչ կոչով հայտարարեց ժողովրդին որ, Էմինը այն մարդն է, որի մասին դեռևս 6 դար առաջ ասել է Ներսես Շնորհալին՝ հերթական անգամ հույսը դնելով մարգարեությունների և նախախնամությունների վրա: Դրան հետևում է բնակչության բնական ռեակցիան, թե ինչու իրենց համար նախկինում նման քարոզ չեն կարդացել, քահանան արդարանում է, թե ամեն ինչ իր ժամանակն ունի: Ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց Էմինին, նրանց հանդիպումը ավարտվեց ողջագուրություններով, ինչն էլ ցույց է տալիս, թե մարդիկ ինչքան ունեին նման առաջնորդի կարիք ու ինչքան էին ոգևորված Էմինի գաղափարներով :Էմինը գաղափարի մարդ էր, ով մտել էր անծանոթ երկիր և ցույց էր տալիս խորը տիրելու ուսումնասիրելու խոշոր ընդունակություն: Այն քիչ տեղերից մեկն էլ, որտեղ Էմինը արժանացավ բարեհաճ

ընդունելության, եղավ Մուշի Ս. Կարապետ վանքը, որի վանահայրն էր Հովհան եպիսկոպոսը, ով հայ այն սակավաթիվ հոգևորականներից էր, որ աջակցեց Էմինին և նրա հետ նամակագրական կապի մեջ էր ծրագրի հարցերը քննարկելու գործով: Էմինի Ճանապարհորդությունը ժամանակավոր դադար է առնում Էրզրումում՝ ձմռան պատճառով: Էրզրումում մնացած մոտավորապես մեկ ամիսը Էմինը չի վատնում,այլ ընդհակառակը՝ նա ձեռք է բերում համախոհների մի ամբողջ բանակ, նրա համբավը տարածվում է ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի շրջանում: Էմինի ազատարար մտքերը լցրել էին օդը, ազատագրվելու հարցը պտտվում էր նրան լսողների ուղեղներում: Էմինի Ճանապարհը շարունակվում է և նրան Բայազետի վրայով տանում հայոց հոգևոր կենտրոն Էջմիածին: Այստեղ ներկայանում է կաթողիկոսին՝ Հակոբ Շամախեցուն,որն էլ նրան լավ է ընդունում՝որպես եվրոպական կրթություն ստացած մարդու և մի քանի շաբաթ հյուրընկալում է: Էմինը որոշում է նախ վերադառնալ Անգլիա, հավաքել դրամական միջոցներ, ստանալ բարձրաստիճան պաշտոնյաների հավաստագրերը, նոր անցնել բուն գործին: Նա նամակ է գրում վրաց Հերակլ թագավորին՝ առաջարկելով ամուսնանալ նրա դստեր հետ: Իր կյանքի հերթական խենթությունը անելուց հետո Էմինը շարժվում է Անգլիա, որովհետև հասկացել էր, որ տեղական սահմանափակ ուժերով լուրջ հաջողությունների հասնել հնարավոր չէ:

Հայաստանից դուրս գալուց 13 ամիս անց՝ 1761թ., Էմինն արդեն Անգլիայում էր: Նրա համբավը դեռևս չէր պակասել Լոնդոնում, նրան ընդունեցին նախկին ջերմությամբ, Նորթումբերլանդի դուքսը նրան կրկին առաջարկում է մնալ ու ծառայել բրիտանական բանակում: Էմինն, իհարկե, այսքան ճանապարհ չէր անցել, որ կիսատ թողներ սկսածը: Էմինը 8 ամիս մնում է Անգլիայում, աշխատում և աշխատանքի բերումով էլ ծանոթանում է Լոնդոնում Ռուսաստանի դեսպան իշխան Գոլիցինի հետ, որից ստանում է հանձնարարական և հավաստագիր ուղղված ռուսաց պետական կանցլեր իշխան Վորոնցովին: Բացի Վորոնցովին ուղղված նամակինց՝Էմինն ուներ նաև հանձնարարականներ Պետերբուրգի ուրիշ ազդեցիկ պաշտոնյաների համար: Արդեն պարզ է, որ Էմինը փոխել էր իր քաղաքական կողմնորոշումը, նա հայացքն ուղղում է Ռուսաստան, որը ժամանակի հզորագույն երկրներց էր: Ճիշտ է, Վրաստանը դեռևս չեր մտել Ռուսաստանի կազմի մեջ, բայց այդ շրջանում չուներ քաղաքական բավարար հզորություն միայնակ պաշտպանվելու մահմեդականների հարվածներից պաշտպանվելու համար:

Վրաստանի հետ համագործակցության գաղափարը դառնում է այն կայծը, որ պիտի հետագայում առաջ բերեր հայ, վրացի, թուրքմեն, ասորի, եզիդ և այլ ժողովուրդների միասնությունը հակաօսմանյան դաշինքի ստեղծման ստեղծման գործում: Օսմանահպատակ ժողովուրդների դաշինքի և համատեղ հանդես գալու հնարավորության վրա էին կառուցված Օսմանյան լծից ազատվելու պայքարում հաջողության հասնելու Էմինի հաշվարկները: Երբ Էմինը 60-ական թթ. Թիֆլիսում էր և մտադիր էր ստանալ Հերակլի աջակցությունը Արևմտյան Հայաստան անցնելու և այն օսմանյան լծից ազատելու համար հենց այդ ժամանակ էր,որ իրեն աջակից էր համարում քրդերին, ասորիներին և օսմանահպատակ մյուս ժողովուրդներին: Այդ մասին Էմինը Մուշից գրում է Հովնանին, ով ժամանակի ուսյալ և բազմակողմանի գիտելիքների տեր հոգևորական էր, սերտ կապեր ուներ Վանի, Կարինի առևտրականների ու արհեստավորների շրջանում, ինչպես նաև Կ. Պոլսի ամիրաների միջավայրում: Նրանք երկուսն էլ կարևոր էին համարում վրացական օժանդակությունը անգամ կարճ ժամանակով: Որպեսզի հաստատվի այդ մտքերի իրականությանը համապատասխանելը մեջբերենք Հովնանի՝ Էմինին գրած նամակը, որտեղ ասվում էր, որ թուրքերն այն չեն, ինչ հարյուր տարի առաջ էին: Չնայած նրա, որ Օսմանյան կայսրությունը թուլացել էր, կային միջկառավարական կռիվներ, այնուամենայնիվ այն չէր պատրաստվում հանձնվել, ինչը անխուսափելի էր դարձնում ազատագրական պայքարին անցնելը, ինչի անխոնջ ջատագովն էր Հովսեփ Էմինը:

Չնայած ռուսական բանակում ծառայելու առաջարկներին՝ Էմինը հաստատակամ էր և շարունակում էր փայփայել Հայաստանի ազատագրության գաղափարը, նրա համար առաջնային էր սկսած գործից՝կա՛մ մահացած, կա՛մ հաղթանակած՝ դուրս գալու համոզմունքը:

Գնահատելով Էմինին, ով, վտանգի ենթարկելով իրեն, ապացուցում է իր ճշմարտությունը, կոմս Վորոնցովը Էմինին տվեց անցագիր, որով էլ Էմինը ցանկանում էր գնալ Մոսկվա: Մոսկվայում, սակայն, Էմինը կրկին հիվանդանում է այն հիվանդությամբ, ինչով, որ տառապում էր Ֆլորանսում: Կարծես պատմությունը չար խաղ է խաղում: Այս անգամ էլ Էմինը չունի նյութական միջոցներ, սակայն դրա համար երբեք չարեց ստորաքարշություն ու չիջավ ծնկի: Ամենաանհրաժեշտ իրերը ձեռք բերելու համար տասներկու ռուբլի փոխառություն վերցրեց հայ եկեղեցական Սուքիաս վարդապետից՝ խնդրելով նրանից, որ դրա մասին ռուսահայությունը չիմանա, վախենալով, որ դրա պատճառով անվստահություն առաջանա իր անվան շուրջ: 1763 թ. Մարտին Էմինը ճանապարհվում է Թիֆլիս: Այստեղ նա լավ

ընդունելության է արժանանում,հանդիպում Հերակլին,նրան ներկայացնում իր ծրագիրը: Էմինը և Հերակլը երկարատև զրույց են ունենում: Էմինը կոչ է անում Հերակլին ստեղծել հայ-վրացական դաշինք, ինչի շնորհիվ հնարավոր կլինի այդ երկու երկրների ազատագրումը ու զարգացումը: Միաժամանակ Էմինը խորհուրդ է տալիս սաստել ազնվականությանը, մտածել ժողովրդի կարիքները բավարարելու մասին, նպաստել կրթությանը, լուսավորությանը, բացել դպրոցներ, զարգացնել զինվորական գործը՝ օրինակ վերցնելով եվրոպական երկրներից՝ մասնավորապես Անգլիայից: Հերակլը համաձայնում է այդ բոլոր առաջարկների հետ, սակայն նշում է շատ կարևոր մի հանգամանք՝ դրամ, ինչը բացակայում էր և՛ Էմինի, և՛ Հերակլի մոտ: Հերակլը կարծում էր, թե Էմինը հնդկահայ մեծահարուստ է, սակայն Էմինը հուսահատեցրեց նրան՝ հայտնելով ճշմարտությունը: Հերակլը չի հավատում Էմինի անկեղծությանը՝ մնալով իր նախկին կարծիքին:

Էմինի գործը ավելի բարդացավ, երբ իրեն աջակցող Հակոբ Շամախեցուն փոխարինեց մեղմ ասած համարձակությամբ աչքի չընկնող և Էմինի գաղափարները չկիսող Սիմեոն Երևանցի կաթողիկոսը: Նոր կաթողիկոսի առաջին գործերից մեկը եղավ Հերակլին նամակ ուղարկելը, որի բովանդակությունն էր հեռացնել Էմինին, չհամագործակցել նրա հետ՝ համարելով նրան վտանգավոր մարդ: Սիմեոնը և Էմինը ճանաչում էին միմյանց երևի դեռ այն ժամանակից, երբ Էմինը գնացել էր Էջմիածին: Սիմեոնը, որը դեմ էր ամեն ապստամբական շարժման, եվրոպական ազատական մտքերին, նոր գաղափարներին՝ դրանք համարելով հայ ժողովրդի դարավոր ավանդական վարքուբարքը և հայ հոգևորականության դիրքերը խախտող երևույթ, չէր կարող օժանդակել դրանց ջատագով Էմինին:

Երկրի ներքին անմիաբանությունը բացասաբար է ազդում արտաքին աշխարհի հետ հարաբերությունների վրա: Հերակլը Էմինին կանչում է իր մոտ, խոսում Սիմեոնի նամակի մասին, Էմինը շատ հանդուգն պահվածք է որդեգրում՝ արտահայտելով իր կարծիքը Սիմեոնի մասին ամենայն անկեղծությամբ: Հերակլի այն հարցին, թե՝Էմինը չի վախենում իր հետ այսպես խոսելիս՝ Էմինը պատասխանում է, որ եթե դու սպանես ինձ, աշխարհը կխոսի, թե Հերակլը վախեցավ մի հայից, ով ցանկանում էր փրկել իր ազգը…, իսկ ես, որ զինվոր եմ, չեմ վախենում այսօր կմեռնեմ, թե՞ վաղը՝:

Այսպիսով՝ Էմինի նկատմամբ դավադրությունը Սիմեոնի կողմից շարունակական բնույթ էր կրում: Սիմեոն կաթողիկոսի նման անհանգստությունը պատահական չէր, քանի որ ինչպես

Վրաստանում, այնպես էլ մյուս բոլոր վայրերում, որտեղ եղել էր Էմինը իրականացրել էր լայանծավալ պրոպագանդա, և շատերն էին ոգրևորված Էմինի գաղափարներով և սպասում էին որևէ կայծի ապստամբություն սկսելու համար: Կաթողիկոսի անհանգստության պատճառներից էր նաև այն, որ Հերակլը համաձայնություն էր տվել ազատամիտ պատանու ՝անմիտ՝ մտքերին:

Էմինի իրականացրած քաղաքականության շնորհիվ ապստամբությունը պաստրաստ էր, նրա սկիզբը ազդարարող զանգը, սակայն, չեղավ: Այդ զանգը հնչեցնող Հերակլը վախեցավ կռվի մեջ մտնել այնպիսի հզոր տերության հետ, ինչպիսին էր Թուրքիան:

Էմինը խայտառակություն է համարում այն, որ քրիստոնյաները չկարողացան դիմադրել ամենաանկարգ ու արհամարհելի թուրքական խաժամուժին: Նա միասնական պայքարը հնարավոր էր համարում միայն այն դեպքում, եթե հայ վաճառականները իրենց դրամ դիզելու ջանասիրության չափ լծվեին ազատագրական պայքարին, եթե չվախենային իրենց միջոցները օգտագործելուց ու խիզախ լինեին, հայ հոգևոր ու աշխարհիկ դասը գործեր միասնական:Ահա այս ՝եթե՝-ների կյանքի կոչմանն էլ ուղղված էր Էմինի քաղաքականությունը:

Այնուամենայնիվ՝ այս ամենի հանրագումարը այն եղավ, որ Հերակլը գրեթե առանց պատճառի Էմինին երեսուն օրով բանտարկում է,ապա հրամայում է հեռանալ Ավճալա գյուղը, իսկ հետո կարգադրում հեռանալ Ռուսաստան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՎԵՐՋԻՆ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԸ

Էմինն այլ ելք չուներ, ստիպված կատարում է Հերակլի պահանջը և հեռանում: Հուսալքված և հուսահատված Էմինը 1763թ. վերջերին թողնում է Վրաստանը: Էմինի հեռանալը բոլորի կողմից չէ, որ ոգևորությամբ է ընդունվել: Շատ ազնիվ և քաջ զորավարներ ցավ ապրեցին. նրանք Էմինին ընդունում էին եղբոր պես՝ գնահատելով նրա քաջությունն ու կորովը:

Էմինի ճանապարհը դեպի Ռուսաստան անցնելու էր Դերբենտով: Նա ճանապարհին հասնում է Շամախ, որտեղ էլ իմանաում է, որ խոյի ու Սալմաստի ասորիները պատրաստ են միանալ իրեն՝ տրամադրելով 18.000 զինվոր: Ասորիների հետ համագործակցության կողմնակից էր նաև Սուքիասը, ով այնքան էր ոգևորված այդ համագործակցությամբ,որ մի առիթով ասել է. ՝Դու պիտի փրկես հայերը ձեռնատվութեամբ Աստուծոյ, որ ցայսօր պահած է զքեզ առանց դրամի: Ան է միայն բարեկամդ, ուրիշ ոչ ոք՝: Առանց այն էլ Էմինի սրտով չէր հեռանալը, այս ամենը լսելուց հետո նա վերջնականապես մտափոխվում է ու գնում Խոյ քաղաքի մոտ գնտվող, ասորաբնակ Խոսրով գյուղ: Այստեղ նրան դիմավորում է ասորի Հովհաննես անունով մի վարդապետ՝ հավաստիացնելով, որ ասորի ժողովուրդը պատրաստ է ապստամբելու: Էմինի նոր ոգևորություն էր պատել, նա հույս ուներ այս անգամ հասնել իր նվիրական ծրագրի իրականացմանը , սակայն տեղ հասնելուն պես հիասթափությունը կրկին դառնում է Էմինի ուղեկիցը: Հովհաննես վարդապետը, տեսնելով, որ Էմինը չունի նյութական միջոցներ, հիասթափվում է, հուսասհատվում՝ ասելով, որ առանց գումարի ոչինչ հնարավոր չէ: Սա հերթական բացասական պատասխանն էր, որ Էմինը ստացավ հայերից:

Հովսեփ Էմինը հայտնվում է անելանելի իրավիճակում՝ կրկին հուսահատութիուն, դժվարին իրավիճակ ու մի անլուծելի թվացող հարց – ինչ՞ անել, շարունակել արդյո՞ք սկսածը, թե՞ թողնել ամեն ինչ ու ընդունել պարտությունը՝ հասկանալով իր անձնական ու սեփական ազգի անճարակությունը: Այս խնդիրների ու երկբայության մթնոլորտում է, որ Էմինը վճռում է կրկին գնալ Թիֆլիս և մի անգամ էլ փորձել Հերակլի բարեհաճությունը: Սակայն պատմությունը կրկնվում է՝ Էմինին հեռանալու հրաման են տալիս:

Երկարատև թափառումներից հետո Էմինը ճանապարհն ուղղում է իր վաղեմի հայրենիք՝ Հնդկաստան, որտեղ թողել էր իր ծնողներին ու հարազատներին: Նա հասնում է Բաղդադ, ապա Բասրա՝ անցնելով Շոշու, Օրդուբադի, Թավրիզի վրայով: Ճանապարհին նա ունենում է տարատեսակ փորձանքներ, ստանում առաջարկներ՝ մասնավորապես Բասրայում, վերադառնալ երկիր ու շարունակել իր կյանքի նվիրական գործը: Այդ առաջարկողները վաճառականներն էին, որոնց նմաններին Էմինը իր ճանապարհին շատ էր հանդիպել: Երկար բանակցություններից հետո Էմինը տեղի է տալիս և հանձնարարում մի քարավան պատրաստել ու գնալ Մուշ՝ վերսկսելու հայրենիքի ազատագրումը: Սակայն, վաճառականների ոգևորությունը մարում է այն արագությամբ, որքանով, որ բռնկվել էր: Սա Էմինի համար անակնկալ չէր, նա շատ էր հանդիպել նման ՝խիզախների՞ ու տեսել նույն արդյունքը: Էմինի հիսաթափությունը աննկարագրելի էր: Նա մարդ էր, ով այդպես էլ չհամակերպվեց իր ժողովրդի անմիաբան լինելու հետ:

Այս դեպքերից խորապես հիասթափված Էմինը 1770թ. արդեն Կալկաթայում էր: Նա առավոտյան արդեն իր հոր տան առաջ էր, սակայն ՝անառակ որդու՞ նման չէր համարձակվում ներս մտնել. Հայրը նրան ուրախությամբ ընդունեց: Էմինը լավ ընդունվեց նաև անգլիացի երիտասարդների կողմից:

Գալով Հնդկաստան՝ նա ծառայության մեջ է մտնում անգլիական բանակում որպես սպա: Այստեղ ևս հայրենիքին օգնելու հույսեր էր փափագում, սկսել էր ռուս-թուրքական պատերազմ, Էմինը մտադիր էր գնալ ու այդպես օգնել հայրենիքին, սակայն դուքսը նրան թույլ չի տալիս՝ ցույց տալով անհնարինությունը:

Էմինը տեղափոխվում է Մադրաս, փորձում է այնտեղ ինչ-որ բան փոխել, համոզել էր մարդկանց դրամ հավաքել բանակ ստեղծելու համար, սակայն մարդիկ նախընտրում են այդ գումարը տալ մի հոգևորականի, ով ևս Մադրասում էր: Այս քաղաքում է, որ հանդիպում է Շահամիր Շահամիրյանին, ով ևս Էմինի գաղափարակիցն էր ու ցավում էր սեփական ազգի տգիտության և վախկոտության համար: Սակայն նա միայնակ չկարողացավ օգնել Էմինին:

Սակայն հիասթափության մասին չլսած Էմինը շուտով 30 նավաստիների հետ հյուպատոսարանի կողմից լիազորվում է ու գնում պաշտպանելու Բասրան, քանի որ թուրք-պարսկական պատերազմ էր, ինչից հետո էլ գնում է Սպահան, որտեղ հանդիպում է Մարկոս վարդապետին, վերջինս իրատես հոգևորական էր, և հենց նրա խորհրդով էր, որ Էմինը հրաժարվում է վերջնականապես իր մտքից ու ամուսնանում մի հայ աղջկա հետ՝ ունենալով 2 տղա և 2 աղջիկ:

Հովսեփ Էմինի վերջին հանգրվանն է դառնում Հնդկաստանը, որտեղ էլ 1809 թ. մահանում է: Նրա աճյունը ամփոփվում է Կալկաթայի հայկական եկեղեցում: Նրա անվան մակագրության հետ գերեզմանաքարի վրա պատկերված են թմբուկ և թնդանոթ, որոնք շատ պարզցույց են տալիս նրա անցած ուղին: Այսպիսով՝ նա հայրենիքի սիրո իրական մարմնացում էր, ով և՛ հալածվեց, և՛ սիրվեց: 18-րդ դարի համար աներևույթ մի կերպար էր, տարօրինակ ու չհամապատասխանող տիրող միջավայրին, հասարակ ծագմամբ մի երիտասարդ, ով ստացավ թագավորների և իշխանների հովանավորությունը, համագործակցեց դավանակիցների ու այլադավանների հետ՝ իր մշտամնա գաղափարներով անագամ քանդելով կրոնական պատնեշը: Հովսեփ Էմինը ճաշակեց ու գնահատեց ազատությունը՝ մարդկության բարիքների միակ աղբյուրը, ու մինչև իր կյանքի վերջ մնաց դրա ջատագովը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խոսելով 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մասին՝ հնարավոր չէ անտեսել այն անհատների դերը, ովքեր միշտ վառ պահեցին հայրենքիքի ազտագրման գաղափարը: Նրանց կյանքի ու գործունեության մարակրկիտ ուսումնասիրությունը ի դերև է հանում այն ճշմարտությունը, որ ազատագրական կռիվները առանց հիմքի չեն եղել: Ազատության և հայրենիքի կարոտ հայ ընտանիքների զավակներն էին, որ իրենց նախնիների երազանքի կատարումը դարձրին նպատակ ու հանձն առան դրա իրականացումը: Ուշ միջնադարից նոր ժամանակների անցումը նշանակալից եղավ ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ հայ ժողովրդի համար, հենց այս շրջանում էր, որ հայը սկսեց հավատալ սեփական ուժերին, մոռանալ հայ ազատագրական լեգենդի բովանդակությունը ու գործել սեփական անկախության ու արժանապատիվ գոյության համար: Այս գործում, իհարկե, իր մեծարժեք դերն ունի Հովսեփ Էմինը, մարդ, որ, սերելով հասարակ ընտանիքից, անձնական արժանիքների շնորհիվ կարողացավ ձեռք բերել համախոհների մի մեծ բանակ, վայելել բարձրաստիճան պաշտոնյաների ընկերակցությունը, սովորել ժամանակի լավագույն ուսումնական հաստատություններից մեկում և վերջապես հետագա սերունդների համար լինել անձնազոհության ու վճռականության օրինակ՝ հաջողություններից չկորցնելով գլուխն ու հավատարիմ մնալով իր նպատակին, երբեք կուլ չգնալով իր ճանապարհին հանդիպած մոլորություններին: Էմինի գաղափարների տարածման համար, իհարկե, կարևոր էր նաև նրա

ունկնդիրների նոր գաղափարներ յուրացնելու կարողությունը: Էմինը, գալով հայկական միջավայր, դարձավ յուրատեսակ կապող օղակ զարգացած եվրոպական աշխարհի ու դեռևս խավարամիտ դարում մնացած հայ ժողովրդի միջև: Նա բերեց նոր մեկնաբանություն ինչպես տիրող իրավիճակի մեջ, այնպես էլ երկար տարիներով արմատացած կարծրատիպերում, որոնք հիմնականում ընդգրկում էին կրոնական ոլորտը: Թվում էր, թե դրանք փոխելը անհնար է, սակայն Էմինը կարողացավ նոր շնչով ներկայացնել և՛ մեր պատմությունը, և՛ մեր կրոնը՝ բացատրելով մարդկանց եվրոպական ժողովուրդների հաջողության ու հզորության գաղտնիքը:

Հովսեփ Էմինի և նրա գաղափարակիցների՝ ազատություն քարոզողների ու դրան հասնելու ճանապարհը նախանշողների գործունեության ուսումնասիրությունը ունի մեծ նշանակություն: Այդ անհատների օրինակով հնարավոր է նոր սերնդի յուրաքանչյուր ներկայացուցչի մեջ ներարկել այն միտքը, որ հենց ինքը կարող է լինել հաջորդ ՝Էմինը՝, հաջորդ ՝Դավիթ Բեկը՝ և հենց իր ուսերին է դրված ազգի ապահովության ու անվտանգության ստեղծումը, իսկ առկայության պայմաններում՝ նրա պահպանումը:

Հովսեփ Էմինի կյանքի ու գործունեության մասին մենք հիմնականում տեղեկանում ենք նրա ինքնակենսագրականից՝ ՝Հովսեփ Էմինի կեանքն ու արկածները՝: Այդ հուշագրության հրատարակումը պակաս կարևոր գործ չէր. դրանով Էմինը եվրոպացիներին էր տեղեկացնում հայ ժողովրդի, նրա խնդիրների ու նպատակների մասին, և, իհարկե, հայ երիտասարդների մոտ փորձում բարձրացնել հայրենասիրության գաղափարը:

Էմինի կյանքը լի էր արկածներով, պատահականություններով, բայց նա կատարեց ազգանպաստ ավելի շատ գործեր, քան անթերի տեսաբանները : Նա մեծ ավանդ ունեցավ Մադրասի խմբի աշխատանքներում, իր ռազմական գիտելիքներով աջակից եղավ իր ժողովրդին ու դարձավ մեր պատմության անքակտելի մաս, կրկին ապացուցեց, որ միայն միասնությամբ հնարավոր է հասնել հաջողության:

Նա պարարտ հող նախապատրաստեց հայ ազտագրական հետագա պայքարի համար ու դարձավ անձնազոհության, հաստատակամության իսկական օրինակ: Միայն նման նվիրյալների գոյության արդյունքում է, որ ազատագրվում են ժողովուրդներ և անհարաժեշտության դեպքում սկսում պայքար անօրինականությունների ու բռնակալությունների դեմ:

Նման գործիչների գոյությունը անգնահատելի է և պատմական հպարտություն յուրաքանչյուր ժողովրդի պատմության համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովսեփ Էմինի կյանքն ու արծկածները «Պեյրուտ» 1958թ
2. Լեո, Երկերի ժողովածու, հատոր 3, գիրք 2, էջ 288
3. Հովհաննիսյան Պ. նշվ. աշխ. էջ 79
4. Չոպանյան Պ. Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի II կեսին, Ի. Էջմիածին 2006թ
5. Ներսիսյան Մ. Հովսեփ Էմին ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ տեղեկագիր 1941 N1 էջ 48

Հետազոտականի մեթոդները՝ գրականության ուսուցում, զրույց:

Հետազոտականի կառուցվածքը- աշխատանքը բաղկացած է հետազոտականից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմված է 23 էջից: